Բշի օրս (14 Ապրէլ) վարդապետն ի Սուրբ Նիկողոս եկաւ եւ առեալ զնա երուսաղէմացիքն տարան ի յՕրթաքօյըն եւ զիոքր վարդապետն այլ։ Առաւօտուն գնացի ի Մղռնկն և անտի՝ ի խանութ եւ երեկոյիս ի Սուրբ Նիկողոս գնացի։

Դշի (15 Ապրէլ) առաւօտուս ի մեր ժամն գնացի և ի հետ Տէր Ղազարին հասպ արաք զառնելիքն և զտալիքն. եւ անտի ի Շէրպէթճի Գրիգորենցն գնացի։

Օրս ի ներսէն թաղաւորն մարդ հանեց ԲՃՋ հանդերձ սիլիհտարովն եւ նորա տուաւ զԱմիթ։ Եւ ի դէպ յետնուցս ասացին ամենեքեան թէ Ջաէֆտէրտարն բռնեցին և զձիանն և զջորիքն կրած. տեսողքն պատմեցին թէ կայր Հ և Ջ, և ի գիշերիս գնա բազումս չարչարեալ՝ թէ ասասցէ գինչն իւր։

Եւ օրս պրծայ գՏաճկաց էլիֆպէն և մտայ ի նոր բան որ կոչի ամմէ. եւ գէլիֆն Աւազ Բշի ըսկսայ ի յողորմութիւնն Քրիստոսի ապաւինելով. գի բազում անգամ ի մանկութենէ ի հետ հարկեալ ի ծնօղաց եւ չատ նախատինս կրեալ վասն բանիս, գի պիտանի էր հանապազ, եւ այժմ ձեռս արկաք բանիս. մինչ Աստուած յառաջացուսցէ։ Եւ օրս լուսինն նոր էր եւ Տաճկաց բառիւն[1]) աւուրս Ըռէճէպ ասեն եւ իւրք նամազ կ'առնեն։

Եւ օրս Դշի (16 Ապրէլ) առաւօտուս գնացի ի Սուրբ Նիկողոս. եւ ձայն ելաւ թէ վէզիրն մեռաւ ի դէմ լուսուս։ Եւ անտի գնացի ի տուն եւ ելեալ գնացի ի դուռս[2]) վէզիրին, և բազում ամբոխ կայր ի դուռս[3]) նորա և ընդ մէյտանն բազմեալ, և յանցս ճանապարհին արք, կանայք, ծերք, տղայք յամենայն ազգաց եկեալ էին, սպասէին ի դուռս հանելոյն գնա։ Ոմանք խնդային եւ ոմանք լային, ոմանք հառաչէին եւ ո-

1) բառիմն. 2-3) դուրս.